ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/258/1

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2022թ. թիվ 26/26-1/9606-2022 գրությամբ «Պետգնումներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.05.2022թ. թիվ 522-ել գրության հիման վրա, 25.05.2022թ. թիվ 26/26-1/9606-2022 գրությամբ նախաձեռնել է «Պետգնումներ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Պետգնումներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Պետգնումներ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Պետգնումներ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/258/1 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.05.2022թ. թիվ 522-ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2022թ.-ի ապրիլի 5-ին հայտարարված «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար կարճաթև շապիկների ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/29 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 01035542, գործունեության հասցե՝ ք. Երևան, Գայի 31, Հեռ.՝ +37495081608):

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 1-ին աշխատանքային օրը՝ 02.05.2022թ.-ին, ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ին eauction համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում (ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում) վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ Պատվիրատուին չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հանձնաժողովը արձանագրեց, որ 13.05.2022թ.-ին lora.vardanyan.92@gmail.com հասցեից Ընթացակարգի հրավերում նշված armeps@epromotion.am հասցեին ներկայացվել է գրություն, որով ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ն հայտնում է, որ չի ստորագրում պայմանագիրը ֆինանսական նկատառումներից ելնելով, ինչպես նաև սահմանված ժամկետում ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ չեն ներկայացվել Պատվիրատուին, իսկ պայմանագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ չի մուտքագրվել համակարգ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները՝ գնահատող հանձնաժողովը ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի տվկալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/258/1 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/258/1 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/258/1 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պետգնումներ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2022թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Պետգնումներ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. «Պետգնումներ» ՍՊԸ-ն, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին ուղղված 13.05.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Պետգնումներ» ՍՊԸ-ն չի ստորագրում «ԷԱՃԱՊՁԲ ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով պայմանագիրը ֆինանսական նկատառումներից ելնելով»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 13.05.2022թ. lora.vardanyan.92@gmail.com հասցեից Ընթացակարգի հրավերում նշված armeps@epromotion.am հասցեին ներկայացվել է գրություն, որով «Պետգնումներ» ՍՊԸ-ն հայտնում է, որ չի ստորագրում պայմանագիրը ֆինանսական նկատառումներից ելնելով, ինչպես նաև սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 17.05.2022թ. ներառյալ, «Պետգնումներ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ, չեն ներկայացվել Պատվիրատուին, ինչպես նաև պայմանագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ չի մուտքագրվել համակարգ և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2022թ. թիվ 26/26-1/9606-2022 գրությունը, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 18.05.2022թ. թիվ 522-ել գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պետգնումներ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2022թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Պետգնումներ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

«Պետգնումներ» ՍՊԸ-ն, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին ուղղված 13.05.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Պետգնումներ» ՍՊԸ-ն չի ստորագրում «ԷԱՃԱՊՁԲ ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/29» ծածկագրով պայմանագիրը ֆինանսական նկատառումներից ելնելով»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 13.05.2022թ. lora.vardanyan.92@gmail.com հասցեից Ընթացակարգի հրավերում նշված armeps@epromotion.am հասցեին ներկայացվել է գրություն, որով «Պետգնումներ» ՍՊԸ-ն հայտնում է, որ չի ստորագրում պայմանագիրը ֆինանսական նկատառումներից ելնելով, ինչպես նաև սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 17.05.2022թ. ներառյալ, «Պետգնումներ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ, չեն ներկայացվել Պատվիրատուին,

ինչպես նաև պայմանագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ չի մուտքագրվել համակարգ և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Պետգնումներ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին 13.05.2022թ. ուղղված գրությամբ հրաժարվել պայմանագիր ստորագրելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2022թ. թիվ 26/26-1/9606-2022 գրությամբ «Պետգնումներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**